# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԷԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄ Է ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

18.03.2020 12:58



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը փաստաբանների և այլ մասնագետների մասնակցությամբ նախաձեռնում է հետևյալ հարցերի վերաբերյալ մասնագիտական քննարկումներ՝

**1. Համաճարակի ազդեցությունը քաղաքացիաիրավական պարտավորությունների նկատմամբ.**

**2. Համաճարակի ազդեցությունը աշխատողների և գործատուների հարաբերությունների նկատմամբ.**

**3. Նոր կնքվող երկարաժամկետ պայմանագրերում գումարի ինդեքսավորման մեխանիզմները.**

**4. Հարկադիր մեկուսացման դեպքում քաղաքացու իրավունքները և պարտականությունները.**

**5. Արտակարգ դրության իրավական ռեժիմի խախտման հետևանքները:**

Քննարկումներն անցկացվելու են Ֆեյսբուք (Facebook) սոցիալական հարթակում հատուկ ստեղծված՝ «**ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐԹԱԿ**» բաց խմբում: Քննարկման արդյունքում մասնագիտական կարծիքները համակարգվելու են և ամփոփ պարզաբանումը հրապարակվելու է ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })